



«ՍՓՅՈՒՐՔՈՒՄ ԱՄԵՆԱՄԵԾ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԸ ԸՅԻՆՔՆԻՐՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՆ Է»

Հայ ազգն իր քաղաքակրթության պատմության, մաքառումների ընթացքում իր հետքերն է թողել աշխարհի գրեթե բոլոր անկյուններում: Դիմակայելով ճակատագրի հարվածներին ու փորձություններին ամենուր ձգտել է պահպանել իր ինքնությունը Լեզուն, Մշակույթը Հավատը... դրանք մեզ համար դարձել են հատուկ գոյականներ, ինչի կենդանի վկաները բազմաթիվ երկրներում հայերի կառուցած հին դպրոցներն ու եկեղեցիներն են:

Պատմականորեն ձևավորված հայկական գաղթօջախների շարքում ուրույն պատմություն ունի Լոր Լախիջևանի կամ Դոնի Ռոստովի հայկական համայնքը իր նոր, բայց հարուստ անցյալի էջերով:

Դոնի հայության մշակութային կյանքում շատ էական է եղել մեր հայրենակիցներ Մ. Լալբադյանի և Ռ. Պատկանյանի դերը: Լոր Լախիջևանի բազում հայ երեխաներ մշակութային և քաղաքական կամուրջ են եղել հայ և ռուս ազգերի միջև:

Այսօր էլ ապրում է Լոր Լախիջևանի հայկական գաղութը: Ապրում է իր մշակութային կյանքով անցյալի ժառանգությունը պահպանելու, իր առջև դրված կարևորագույն խնդրով: Այդ նվիրյալներից են համայնքի հոգեվոր առաջնորդ Արժանապատիվ Տեր Տիրան քահանա Ավագյանը, երեցկին Անուշ Գրիգորյանը, որոնց անխնայ, անմնացորդ նվիրումի շնորհիվ գործում է «Հայրոջաց տունը» («Ձվարթոնց» պարային համույթը, «Լախիջևան» վոկալ երգչախումբը, ՀԵԵՄ-ը և Հայկական դասարանը): Տեր Տիրան քահանա Ավագյանի նվիրական ջանքերով Մ. Հարություն եկեղեցուն կից վերացվեց թիվ 14 վարժարանի Հայկական դասարանը: Հայրոջաց տանն այսօր ուսանում է շուրջ 300 աշակերտ: Երանյուհիները կարող ենք ասել, որ Տեր հայրը կարողացել է վերածնել տեղի ազգային-հոգևոր կյանքը ասես ստեղծելով մի փոքրիկ Հայաստան:

Եվ մի երիտասարդ հայ ուսուցչուհի Ռուզաննա Կարապետյանը, որը 7 տարի առաջ է հաստատվել Դոնի Ռոստովի հայկական համայնքում, արդեն մտա երեք տարի՝ հետամուտ Միլվա Կապուտիկյանի պատգամին, օտար ավերակ ապրող հայ մանուկներին է փոխանցում մեր «հայրց լեզուն հազարագանձ», պատմում նրանց Հայի անցած ճանապարհին ու մշակութային սիրելիքների մասին, որոնք նրանց հոգում հայարտություն են սերմանում: Չկա ազգային կյանքում որևէ նշանավոր իրադարձություն, որին չանդրադարձան Արժանապատիվ Տեր Տիրան քահանան ու երեցկինը: Իրա դրսևորումներից մեկը վերջերս Տեր Տիրան քահանա Ավագյանի օրհնությունն էր երեցկուց Անուշ Գրիգորյանի նվիրական ջանքերով տեղի ունեցած միջոցառումն էր նվիրված Գոմիտաս Կարապետյանի «Ամենայն Հայոց Բանաստեղծ» Հովհաննես Թումանյանի 150-ամյակներին:

Գլխավորը աշխարհում մայրենի լեզվի պահպանումը ուսուցումն ու փոխանցումը պետք է դառնա առաջնային նպատակ, - սա է Ռուզաննա Կարապետյանի հավատամքը:

ՀԱՅՈՑ ԼԵՂՈՒՆ ԵՎ ՍԵՎՈՒՅՑԸ ՊԵՐՊԵՆԵՆԻ ԳՐՈՍՄՈՒԿ

...Ռուզաննա Կարապետյանի հետ մենք գրուցել ենք Դոնի Ռոստովի մեր հայրենակիցների հոգևոր-մշակութային կյանքի, հայապահպանության խնդիրների և արդի մարտահրավերների մասին, որի ընթացքում մենք փորձել ենք վեր հանել նաև գաղթօջախի պատմությանը վերաբերող ոչ բոլորին հայտնի էջեր:

Դպրոցը, որտեղ աշխատում են ես, ունի հետաքրքիր ու հարուստ պատմություն, - ասում է Ռուզաննա Կարապետյանը: - Այն բացվել է 1882 թվականին բարերար Սկրտիչ Գոգոյանի կողմից իր երկհարկանի տանը: Սկզբում այն եղել է օրինորդ դպրոց: Մսիկց առաջ նա կտակ է գրել, որ հայ մանուկներն անտի է մնացել, և իր ժառանգությունը թողնում է հայ երեխաներին: Եվ սա բացվում է դպրոցը, որի հանդիսավոր արարողության ժամանակ էլույթ է ունեցել նաև Ռաֆայել Պատկանյանը: Դպրոցը հետագայում անվանափոխվել է Խորհրդային Հայաստան, որ դպրոցից մի քանի քալ այն կողմ գտնվում է Մմբատ Շահազիզի տունը, որը հայկական շունչ է հաղորդում միջօրյային: Իր գոյության սկզբից այստեղ հայրց լեզվի դասավանդումը եղել է պարտադիր պայման: Հինգ, ցավոք, այն անգլիական թերուսով է: Եվ ես հայացք գցելով դպրոցի անցյալի պատմությանը, ուզում եմ կարևորել Ավետիք Բահանյանի խոսքերը, ով, ամենևին էլ չանտեսելով բազում օտար լեզուների իմացությունը, հայ սերունդներին այսպիսի կարևոր պատգամ է տվել: «Մայրենի լեզվի բաները մենք գգում ենք, ապրում, իսկ օտար լեզվերը սովորում, հասկանում, հիշում... Մտու է այն լուսավորությունը, որ պիտի լինի օտարի լեզուն: Այդպիսի դիպվածում դուք ձեր գավակները օտարացնում եք ձեզանից: Նրանց

գավակները անուսով միայն կլինին հայ, իսկ հաջորդ սերունդները ավերորդ կհամարեն այդ անունը կրել յուրյանց վրա: Ուրենն խելամիտ եղեք, և թող ձեր դպրոցներում հենց մայրենի լեզուն: Այո, որքան էլ հայ մանուկը օտար լեզուներ սովորի, մեզ համար առաջնայինը պետք է նրան մայրենի լեզվուն փոխանցելը լինի:

– Հարգելի Ռուզաննա, ինչպե՞ս ընտրեցիք ուսուցչուհու դժվարին և պատասխանատու գործը:

– Մեր ընտանիքում մանկավարժներ չեն եղել: Պատկանյան եղբայր բանասիրական գիտությունների թեկնածու Հովհաննես Լազարյանն է եղել: Իրենց տանը հաճախ են հյուրընկալվել Պարույր Սևակը, Հովհաննես Շիրազը, Մարտիրոս Սարյանը... Մայրս մեծացել է մտավորականների միջավայրում: Ես պատկանում եմ կերպար շատ լավ եմ հիշում: Նա մեզ դաստիարակում էր մեր մեծերով, գիր ու գրականությամբ: Նշեմ նաև, որ հորաքույրս երկար տարիներ դասավանդել է Հայոց լեզուն և գրականություն: Նրանց կերպարը ինձ համար դարձավ ուղեկից ընտրելու ուսուցչուհու անխնայ, անձնվեր աշխատանքը:

– Ասում են՝ ուսուցիչ լինելը կոչում է, ոչ թե՛ մասնագիտություն...

– Միանշանակ: Մանկավարժությունը սիրել են դեռ մանկուց: Միքել են գրել-ընկել: Եվ երբ արդեն ինքս ուսուցչուհի էի, հասկացա, որ մանկավարժ չեմ դառնում, ծնվում էն: Ես դա բացահայտել եմ մեր մեծերի, իմ դասախոսների ու ընտանիքի օրինակներով:

– Ի՞նչ խնդիրների եք բխվում՝ օտարության մեջ հայ երեխաների հայեցի կրթության հետ կապված:

– Միայն որից առջև ծառայում ամենամեծ մարտահրավերը հայ ինքնության կորստի վտանգն է: Մեր ազգային ինքնությունը դարձրել շարունակ խաբսխված է եղել լեզվի, կրոնի, ազգային մշակույթի պահպանման ու տարածման վրա: Միայն որում հայ ինքնության պահպանության համար չափազանց կարևոր է մայրենի իմացությունը և սրբազորն պահպանումն ու փոխանցումը ամեն հաջորդ սերունդին: Մեզ պետք է առաջնորդի այն գիտակցությունը, որ լեզուն ազգի բյուրեղյա, պղծված արժեքն է՝ աստվածապարզ էությունը: Ի վերջո, Հայոց լեզուն հնագույն քաղաքակրթության լեզու է: Նրա խնամքով ու պահպանությամբ պետք է զբաղվենք ամենքս աշխարհի որ անկյունում էլ լինենք: Եվ տեղին են համարում մտաբերել Պարույր Սևակի հանձարել բնորոշումը. «...Մեր լեզուն միայն մեզ չի պատկանում, այլ աշխարհին, և միայն մեր պարտությունն է: այլ մասունքը հանուր մարդկության... Այդ լեզվի խնամքը, նրա անաղարտությունն ու պաշտպանությունը դրված է մեր վրա»:

– Ռուսաստանը թեև ամենամեծ հայկական համայնքն ունեցող երկրներից է, սակայն ունենք հայ երեխաների հայկական դպրոցներ հաճախելու մեծ խնդիր: Ձեր դիտարկումներով որք էր նրա պատճառները: Ի՞նչ ուղիներ կան այս, հիբրավի, ազգային նշանակության հարցը կարգավորելու համար:

– Այո, հիբրավի, Ռուսաստանն ամենամեծ հայկական համայնք ունեցող երկրներից է, և մենք ունենք հայ երեխաների հայկական դպրոց հաճախելու մեծ խնդիր: Այստեղ մայրենի լեզվի հարցն օրակագային է: հայերի մեծամասնությունը չի տիրապետում կամ էլ մասամբ է տիրապետում հայերենին: Երբօրյա պայմաններում, անշուշտ, սույն խնդիրն ունի հոգեբանական, լեզվաբանական, մշակութային հաղորդակցման և նմանատիպ այլ դրսևորումներ: Չնայած դարձի վեր պայքարած ազգը, անցնելով բազում փորձությունների միջով, մեզ է ավանդել մայրենի լեզվի լույսը, որը դարձել է վանան ու հովանի իր գործույթում մաքառել, հասել է բարձունքի:

– Վերը նշված իրողություններն առկա են Միջուրքի մյուս գաղթօջախներում ևս: Միևնույն մեր պատմությունից գիտենք, որ Լեզուն, Մշակույթը ազգի գոյության ցուցիչներն են: Այսօրվա գլխավորը, հոգևոր մարտահրավերներով իր աշխարհում ինչպիսի գաղափարներ ու ծրագրեր են հարկավոր ներդնել մեր աշխարհապիտու ազգի սերունդին իր արմատին ու Հայրենիքին կապելու համար:

– Գլխավորը աշխարհում մայրենի լեզվի կիրառումը և ուսուցումը պետք է դառնա առաջնային նպատակ, քանի որ մասնավորապես պատմում է արդեն մեր ինքնությանը: Հայ ազգային ինքնության պահպանումը, սերունդներին հայեցի կրթելու, դաստիարակելու, պատմական ակունքներին հաղորդակից լինելու ձգտումը, հայ ազգի հոգեկերտվածքի բաղկացուցիչ մասն է: Այսօր ուժացումն անհանգստացնող երևույթ է մեզ համար: Դարեր շարունակ Հայ Առաքելական եկեղեցին ջանացել է օտար հողում հայկական կրթօջախները պահելու համար: Եվ որպեսզի Հայրենիք-Միջուրք կապը լինի անբաժանելի, պետք է պետական մակարդակով կազմվեն հրատապ ծրագրեր, ամրապնդվի լեզվական, մշակութային միասնությունը, ավանդույթների կարևորությունը: Յուրաքանչյուր միջավայր և ժամանակաշրջան ինքն է թելադրում սկզբունքները և սերնդին հայեցի կրթելու մեթոդները:

– Ուզում եմ հիշենք աշխարհահռչակ Վիկտոր Համբարձումյանի խոսքերը. «Գիտցիք, որ քանի ապրում են, իմ կյանքի ամենամեծ երջանկությունը եղել է և կլնա հայոց լեզվին տիրապետելը»: Հոգևոր գարգացման ինչ ճանապարհն էլ պետք է անցնի Միջուրքում մեծացող հայ երեխան այդ գիտակցությանը հասնելու համար: Եվ ոչ ոք պետք է լինի յուրաքանչյուրիս անելիքը:

– Եվ դրանով ամեն ինչ ասված է: Աշխարհառակ աստղաֆիզիկոսը սերունդներին է կտակում Հայոց լեզուն, որն ամենաթանկն է...

– Կանգ առնենք Մեծն Գոմիտասի հետևյալ խոսքերի վրա. «Ուսուցիչ պարունենք ու քույրեր, գգուշությամբ և երկյուղածությամբ մտնեցեք դաստիարակության գործին. խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը: Դաստիարակելու կոչված եք սերունդ մը, որ ապագա ազգն է: Միայն ուղղությամբ ազգ մը կը խորտակեք վերջը»: 21-րդ դարում ինչպիսի պատասխանատվություններ պետք է վերաբերվի հայ ուսուցիչն իրեն վերապահված այդ սրբազան առաքելությունը լինի Հայաստանում, թե Միջուրքում:

– Անշուշտ, դպրոցն ընտանիքի և հասարակության միջև անբաժանելի կապ ստեղծողն է: Մանկավարժի պշխատանքը սույն մասնագիտություն չէ, այլ անձի ձևավորման և զարգացման օրինաչափությունների, ուսուցման և դաստիարակության ձևերի մեթոդների և բովանդակության մասին գիտություն է: Երեխային կրթելու անընդմեջ գործընթացը, գիտելիքների հաղորդումը և յուրացումը պետք է լինի նրա ներաշխարհը թափանցելու միջոցով:

Որպես ուսուցչուհի՝ միշտ մտածել եմ, երբ սկսվեց Հայոց գեղասպանությունը, ոչնչացրեցին նախ մտավորականությունը, այսինքն ազգի մշակույթը վերաբարձող ու պահպանող ուժին: Տեղապահին թիրախը մեր ազգին գաղափարական առաջնորդի գրկելն էր: Բայց մենք դեռ կանք ու պետք է պահենք մեր մշակույթը, որ մշակույթն էլ մեզ շարունակելու պահել-պահպանել: Մա օրվա հրամայական է:

– Հայոց լեզվի Այբուբենի գործության մասին տարբեր ազգերի գիտնականներ են խոսել: Նույնիսկ փաստոր կան, որ ռուս տիեզերագնացներն իրենց հետ հաճախ Հայոց լեզվի Այբուբենի պատկերն են տարել իմանալով նրա տիեզերական ուժի և աստվածապարզ լինելու մասին: Իսկ ամենակարևորն այն է, որ մեր Այբուբենի իր մեջ առողջ է պարունակում: Համաձայն իմ արդյոք, որ այսպիսի մտացված գիտելիքներն ու փաստերը հայ երեխային փոխանցելով մենք մեր սուրբ ավելի ուժեղ ու անպարտելի կրթանքներ:

– Այո... Լիովին համամիտ եմ: Պատահական չէ, որ իմ դասասեսնակի մի անկյունում տեղադրել են «Տերունական աղոթքը», մյուս կողմում՝ «Մաշտոցյան աղոթքը»: Ես չեմ դադարում իմ սաների հետ խոսել Հայոց Այբուբենի հետ կապված գիտական պատմությունների, նրա գործության մասին, թե ինչպես Մերքոպ Մաշտոցը մեր գրերը ստեղծեց աստվածային տեսիլքով: Երկրպագում եմ մեր մշակույթը պատմական գույազանների մեջ, ներկայացնում եմ, թե ինչպես է, օրինակ անգլիացի բանաստեղծ Ջորջ Բայրոնը Միսի-

թարյան միաբանություն այցելելուց և հայկական քաղաքակրթությունը բացահայտելուց հետո ասել հետևյալ խոսքերը. «Ես սովորել եմ հայերի լեզուն, որպեսզի հասկանամ ինչ լեզվով են խոսել աստվածները, քանզի հայոց լեզուն աստվածների լեզուն է... Եվ Հայաստանն աստվածների հայրենիք է, աստվածներն էլ ծնունդով Արարատյան դաշտից են»:

Եվ նման գույազանները երեխաների մեջ, հիբրավի, մեծ հետաքրքրություն են առաջացնում դեպի սեփական պատմությունն ու մշակույթը: Ինձ հպմար նշանակություն չունի երեխան հայախոս է, թե ոչ: Նշանակություն չունի նաև նա գտարյուն հայ է, թե խոսն ամուսնության ընտանիքում ծնված: Ինձ համար կարևորը նրա հոգին տանող ճանապարհը գտնելն ու մեր պատմությունը, լեզուն, արժեքները հաղորդելն է: Եվ դարձյալ ուզում եմ հիշենք հռչակավոր աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանին, ում խոսքերը, իսկապես կտակ են սերունդներին. «...Ինձ հաջորդող սերունդներին, թոռներին, ծոռներին կտակում եմ տիրապետել հայոց լեզվին: Ամեն մեկը պետք է իր պարտքը համարի ուսումնասիրել հայոց լեզուն, գրագետ լինի հայերենից, անկախ այն բանից, թե քանի տոկոս է նրա մեջ հայկական արյունը: Այդ սովորը ոչինչ չի նշանակում: Մենք փոխանցում ենք սերունդներին ոչ թե արյուն, այլ գաղափարներ են գաղափարների մեջ ինձ համար ամենաթանկը հայոց լեզուն է: Այդ կապակցությամբ յուրաքանչյուր սերունդ պարտավոր է սովորեցնել հաջորդին հայոց լեզուն»:

– Հիշենք նաև Անտուան Մեյեի խոսքը. «Հայոց Այբուբենը մի գույազործն է, որ պահպանվում է մինչև այսօր առանց փոփոխություն կրելու: Այդ լեզվի ճկունությունն ու ճոխությունը ուժ է եղել այդ ժողովրդի համար»: Ինչպե՞ս է Ձեզ ժամանակի հետադարձությունից ներկայանում ֆրանսիացի հայագետի այս բնորոշումը:

– Դրանք առավել մեծ կարևորություն են ստանում հատկապես օտար ավերակ: Եվ ես միշտ մեկնակետ եմ վերցնում Շահան Շահնուրի «Նահանգն առանց երգի» ստեղծագործությունը, որը մեծ գաղափարի խտացում է. պե տք է պահպանել լեզուն: Եթե մենք հայերս, չկարողանաք պահել ու արժևորել մեր լեզուն, սերունդներն անգամ առ Աստված ուղղված աղոթքը կարտաբերեն օտար լեզվով: Շառ դեպքերում դա արդեն իսկ տխուր իրականություն է: Եվ չպետք է թույլ տանք, որ իրականանան գրողի տագանալի կանխատեսումները: «Իսկ մենք կը վճարենք իբրև վերջին փրկագին այն, որ պիտի գա: Իբրև վերջին փրկագին՝ մանուկներ, որոնք կրնային մեծանալ, ապագայի սերունդներ, որոնք սեզմե վերջ պիտի գային: Արդվետն այն, որ պիտի գա, պիտի ըլլա օտար բանիվ և գործով...»:

– Ինչպիսի՞ն է Հայաստան-Հայրենիքի այն կերպարը, որ Դուք որպես մանկավարժ ունեք Ձեր մտապատկերում: Կիսուք ք Ձեր երազանքի ու ծրագրերի մասին:

– Իմ երազանքների Հայաստանի պատկերը վրձնել են մեր գրողներն ու բանաստեղծները: Մեր մեծերը մեզ շատ պատգամներ են թողել Մուշեղ Իջևան, Հովհաննես Շիրազ, Համո Սահյան... Նրանց, ինչպես նաև ավելի վաղ ժամանակներում ապրած մեր մյուս մեծերի ստեղծագործական ժառանգության մեջ անթողված վեհ գաղափարները մեկնաբանելով ու հանրագումարի բերելով պետք է կարողանանք կառուցել մեր երազանք ուժեղ ու հզոր Հայաստանը, որի դեմ անգոր կլինեն նաև երրորդ հազարամյակի հողմերը:

– Կհուցի 22 գարուն ապրած և հայ գրականության մեջ անգնահատելի գանձեր թողած Միսաք Մեծաբեկն իր փոքր տարիքում արդեն հանգել էր մեծ գաղափարի անելով. «Օգտվեք եվրոպական լեզուներու նորանոր ու թարմ արտահայտություններն են, բայց չնոսանանք գրարարին հուռույթ շղջմարաններն օգտվիլ մանավանդ: Ինչու մեր հացը գետին ձգենք ու մտրացիկ ուրիշի հետնեն վազենք»: Որպես ուսուցչուհի՞ ո՞րն է Ձեր պատգամը հայ մանուկներին:

– Ճանաչել նր ո գնահատել նր մեր Հայրենիքը, մեր քաղաքակրթությունը: Դա այն ամուր հողն է մեր ոտքերի տակ, որն անսասան է պահելու մեզ գալիք դարերում: Միանգամայն ճշմարիտ է պատմական ավանդազարյուցը. պարսից Շապուհ արքան, չկարողանալով հանգանդեցնել Հայաստանն իրեն, հրավիրում է Արշակ արքային ու սպարապետ Կասակ Մամիկոնյանին: Ես Հայաստանից բերել է տուպի հող և ջուր, հրամայում դրանք շաղ տալ խորանի հատակի մի հատվածի վրա: Այնուհետև գրուցում են իրենց երկրների հարաբերություններին մասին. պարսից հողի վրա Արշակ արքան զղջումի և ավիսսանքի խոսքեր է ասում, իսկ երբ ոտք է դնում Հայոց հողի վրա, դառնում է ուժեղ ու համարձակ խոստանալով վերադառնալուն պես պատժել իր երկրի անդորրը խաթարող թշնամի թագավորին: Իսկ օտար հողում մեզ ուժ սովորը Հայրենիքն ու հայ մշակույթն են...

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ